# Մեծագույն անկյուն

N x N չափի աղյուսակի յուրաքանչյուր վանդակում գրված է մեկ ամբողջ թիվ։ Աղյուսակի յուրաքանչյուր վանդակի համար K երկարության անկյուն անվանենք այդ վանդակից աջ գտնվող ինդեքսների աճման կարգով նույն տողում գտնվող հաջորդական K վանդակները և այդ վանդակից ներքև ինդեքսների աճման կարգով նույն սյունում գտնվող վանդակները, ինչպես նաև այդ վանդակը։ Եթե տվյալ վանդակից աջ և/կամ ներքև K հատ վանդակ չկա, պետք է վերցնել մինչև տողի վերջը / մինչև սյան վերջը բոլոր վանդակները։

Հարկավոր է գտնել աղյուսակի այն վանդակը, որի K երկարության անկյան վանդակներում գրված թվերի գումարը մեծագույնն է։ Պետք է արտածել այդ վանդակի կոորդինատները։

***Մուտքային տվյալներ***

Առաջին տողում տրված են N և K (N ≤ 1000, 1 ≤ K ≤ N/2) ամբողջ թվերը։ Հաջորդ N տողերից յուրաքանչյուրը պարունակում է, իրարից մեկական բացատանիշով անջատված, N ամբողջ թվեր՝ աղյուսակի վանդակների արժեքները։ Այդ բոլոր թվերը –10000-ից 10000 սահմաններում են։

***Ելքային տվյալներ***

Պետք է արտածել մեկ բացատանիշով իրարից անջատված երկու թիվ՝ մեծագույն գումարով վանդակի տողի համարը և սյան համարը։ Եթե այդպիսի մի քանի վանդակներ կան, պետք է ընտրել այն, որի տողի համարը փոքրագույնն է, իսկ եթե նույն տողում մի քանի այդպիսի վանդակ կա, պետք է ընտրել այն, որի սյան համարն փոքրագույնն է։

***Օրինակ***

| Մուտք | Ելք |
|---|---|
| 6 3<br><br>1 2 6 9 -1 0<br><br>1 3 -5 0 2 8<br><br>6 2 2 -7 3 1<br><br>5 5 -3 7 -2 4<br><br>1 1 1 12 0 6<br><br>-2 3 7 10 2 1 | 4 4 |